ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

21 հունիսի 2016 թվականի **թիվ 76** քաղ. Մոսկվա

Վիետնամի Սոցիալիստական Հանրապետությունից ծագող եւ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տարածք ներմուծվող երկարահատիկ բրնձի առանձին տեսակների մասով սակագնային քվոտայի ծավալի սահմանման մասին

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 45-րդ հոդվածին, «Եվրասիական տնտեսական միության եւ դրա անդամ պետությունների միջեւ՝ մի կողմից, եւ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության միջեւ՝ մյուս կողմից, ազատ առեւտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) երկրորդ գլխին եւ Համաձայնագրի 1-ին հավելվածին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց.**

1. Սահմանել Վիետնամի Սոցիալիստական Հանրապետությունից ծագող եւ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տարածք ներմուծվող երկարահատիկ բրնձի առանձին տեսակների մասով սակագնային քվոտայի (այսուհետ համապատասխանաբար՝ երկարահատիկ բրինձ, սակագնային քվոտա) ծավալները՝ հավելվածի համաձայն։

2. Սահմանել, որ՝

սակագնային քվոտան կիրառվում է «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձեւակերպվող երկարահատիկ բրնձի մասով.

երկարահատիկ բրինձը ներառվում են «Երրորդ երկրների առնչությամբ ոչ սակագնային կարգավորման միջոցների մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 7-րդ հավելված) 4-րդ կետով նախատեսված եւ «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցում՝ Եվրասիական տնտեսական միության պաշտոնական կայքում հրապարակվող այն ապրանքների միասնական ցանկում, որոնց նկատմամբ երրորդ երկրների հետ առեւտրում կիրառվում են ոչ սակագնային կարգավորման միջոցներ։

3. Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններին՝

իրականացնել սույն Որոշման 1-ին կետով սահմանված սակագնային քվոտաների ծավալների բաշխումն արտաքին առեւտրային գործունեության մասնակիցների միջեւ՝ իրենց օրենսդրությանը համապատասխան.

հանձնարարել գործադիր իշխանության լիազոր մարմիններին իրականացնել երկարահատիկ բրնձի ներմուծման լիցենզիաների տրամադրում։

4. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից, սակայն ոչ շուտ, քան սույն Որոշման պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալը։

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի նախագահ՝ Տ. Սարգսյան

ՀԱՎԵԼՎԱԾ

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի
հունիսի 21-ի թիվ 76 որոշման

ԾԱՎԱԼՆԵՐԸ

Վիետնամի Սոցիալիստական Հանրապետությունից ծագող եւ «Եվրասիական տնտեսական միության եւ դրա անդամ պետությունների միջեւ՝ մի կողմից, եւ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության միջեւ՝ մյուս կողմից, ազատ առեւտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագրին համապատասխան Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տարածք 2016 թվականին ներմուծվող երկարահատիկ բրնձի առանձին տեսակների մասով սակագնային քվոտայի

Ապրանքի անվանումը	ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Սակագնային քվոտայի ծավալները (տոննա)				
		Հայաստանի Հանրապետություն	Բելառուսի Հանրապետություն	Ղազախստանի Հանրապետություն	Ղրղզստանի Հանրապետություն	Ռուսաստանի Դաշնություն
Ամբողջովին ծեծած շոգեհարած երկարահատիկ բրինձ՝ լայնության նկատմամբ երկարության՝ 3 կամ ավելի հարաբերակցությամբ	1006 30 670 1	0,0	1026	0,0	0,0	8974

Ամբողջովին ծեծած շոգեհարած այլ երկարահատիկ բրինձ՝ լայնության նկատմամբ երկարության՝ 3 կամ ավելի հարաբերակցությամբ	1006 30 980 1					